ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-24/16 ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացնում եմ «Դոնեռ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) (ՀՎՀՀ 01052798) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

«Դոնեռ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար՝ վարչապետի աշխատակազմի կողմից կազմակերպված ատրճանակների և հրացանների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-24/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժնով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 13.10.2023թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Դոնեռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերից առկա է միայն հավելված N 2-ը (գնային առաջարկը), armeps.am համակարգում կցված մյուս փաստաթղթերը չեն համապատասխանում «ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-24/16» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես՝

- հավելված N 1-ը (գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն) կցված չէ armeps.am համակարգում:
- հավելված N 1.1-ը (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) կցված չէ armeps.am համակարգում:
- բացակայում է լիազորագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և ծանուցել «Դոնեռ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով սահմանված ժամկետի ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

17.10.2023թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել շտկված փաստաթղթերը, ուստի Հանձնաժողովը որոշել է մերժել «Դոնեռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի համաձայն, և նախաձեռնել ընթացակարգ՝ «Դոնեռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Նույն արձանագրությամբ, Հանձնաժողովը որոշել է «ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-24/16» ծածկագրով գնման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը (...), ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Պատվիրատուն արձանագրում է, որ «Դոնեռ» ՍՊԸ-ն իր կողմից գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հայտով ներկայացված փաստաթղթերը սահմանված ժամկետում չշտկելով՝ խախտել է ***գնման գործընթացի շրջանակում իր կողմից ստանձնված պարտավորությունը,*** որը հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «Դոնեռ» ՍՊԸ-ին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «Դոնեռ» ՍՊԸ-ին ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ